ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 43

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

22-ը փետրվարի 2020թ.

Նիստին ներկա էր գիտական խորհրդի 35 անդամներից 31-ը:

Նիստը վարում էր գիտական խորհրդի նախագահ Ա. Հ. Մակարյանը, նիստի քարտուղարն էր Մ. Ս. Աթոյանը:

Գիտական խորհրդի նախագահ Ա. Հ. Մակարյանը բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի 2019-2020 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի նիստերի ժամանակացույցի հաստատում: /Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ գիտքարտուղար **Մ. Ս. Աթոյան/**

2. ԵՊՀ ԻՄ 2019-2020 ուստարվա երկրորդ կիսամյակի անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցուցակի հաստատում: /Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ ՈՒՄՎ պետ **Ա. Ց. Դավթյան/**

3. Հաղորդում ԵՊՀ ԻՄ 2019թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի (բյուջե) հունվար-դեկտեմբեր կատարողականի մասին: / Զեկուցող ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար **Ա.Հ. Մակարյան** /

4. Հաղորդում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ 2018-2019 ուստարվա ուսանողական հարցումների արդյունքների մասին: /Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ ՈՒՄՎ պետ **Ա. Ց. Դավթյան/**

5. «Ռուսաց լեզու և գրականություն» և «Հոգեբանություն» կրթական ծրագրերի հաստատում: /Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ ՄԿՈԱ բաժնի վարիչ **Մ. Ա. Ճաղարյան/**

6. ԵՊՀ ԻՄ «Տուրիզմի կառավարման և մշակութաբանության» ամբիոնի ասիստենտ, տնտեսագիտության թեկնածու **Սիմոն Հովհաննեսի Իսկաջյանին** և ԵՊՀ ԻՄ «Հայոց լեզվի և գրականության» ամբիոնի ասիստենտ, բանասիրական գիտությունների թեկնածու **Ալիսա Զավենի Հասանյանին** դոցենտի գիտական կոչում ստանալու համար սահմանված գործընթացին մասնակցելու մասին: /Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ գիտքարտուղար **Մ. Ս. Աթոյան/**
7. Հաղորդում դեկանների ժամանակավոր պաշտոնակատարների և ամբիոնների վարիչների ժամանակավոր պաշտոնակատարների կարգավիճակի մասին: / Զեկուցող ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար **Ա.Հ. Մակարյան /**
8. ԵՊՀ ԻՄ «Տավուշ» հետազոտական կենտրոնի կանոնադրության հաստատում: / Զեկուցող ԵՊՀ ԻՄ-ի իրավախորհրդատու **Ն. Նազարյան /**

9. Ընթացիկ հարցեր:
   9.1. Փոփոխություններ ԵՊՀ ԻՄ հաշվապահության կանոնադրության մեջ:
   9.2. ԵՊՀ ԻՄ անձնակազմի կառավարման և իրավական ապահովման բաժնի կանոնադրության հաստատում:
   9.3. ԵՊՀ ԻՄ տնտեսական գործունեության կազմակերպման և սպասարկման բաժնի կանոնադրության հաստատում:
   9.4. ԵՊՀ ԻՄ ներքին կարգապահական կանոնների /հաստատված ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի 2017թ. դեկտեմբերի 26-ի թիվ 28 նիստում/ 34-րդ, 35-րդ և 36-րդ կետերում փոփոխություններ կատարելու մասին:

Գիտխորհրդի անդամների կողմից օրակարգի համար այլ հարց չառաջարկվեց և մասնակիցների բաց քվեարկությամբ՝ 31 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ընդունվեց նիստի օրակարգը:

<u>Օրակարգի առաջին</u> ՝ «ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի 2019-2020 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի նիստերի ժամանակացույցի հաստատում» հարցի կապակցությամբ լսեցին ԵՊՀ ԻՄ գիտքարտուղար Մ. Աթոյանի հաղորդումը: Նա նշեց, որ գիտական խորհրդի հաստատմանը ներկայացված 2019-2020 ուստարվա երկրորդ կիսամյակի գիտխորհրդի նիստերի ժամանակացույցի նախագիծը կազմվել է՝ հիմք ընդունելով ԵՊՀ ԻՄ ռազմավարական ծրագիրը, ԵՊՀ համապատասխան ժամանակացույցը, խորհրդակցելով ԵՊՀ ԻՄ բոլոր ստորաբաժանումների ղեկավարների հետ:

Արտահայտվեցին – ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանը, ԵՊՀ բնական և ճշգրիտ մասնագիտությունների գծով պրոռեկտոր, Ռաֆայել Բարխուդարյանը, Տուրիզմի և մշակութաբանության ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար Գ. Հովհաննիսյանը, Արհբյուրոյի նախագահ Ա. Մարգարյանը, Հայոց լեզվի և գրականության ամբիոնի դոցենտ Վ. Աղաբաբյանը և այլոք:

Մասնավորապես առաջարկվեց, «**ԵՊՀ ԻՄ ստորաբաժանումների կանոնադրությունների հաստատում կամ փոփոխություններ**» հարցի փոխարեն գրել «**Ընթացիկ հարցեր**» և դրա մեջ մայիս ամսվա գիտական խորհրդում այլ հարցերի հետ միասին ավելացնել նաև «**Գնահատման համակարգի վերաբերյալ քննարկում**» հարցը:

Այնուհետև ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանը առաջարկեց հաստատել գիտական խորհրդի 2019-2020՝ ուստարվա երկրորդ կիսամյակի նիստերի ժամանակացույցը՝ նշված փոփոխություններով:

Բաց քվեարկությամբ, միաձայն՝ 31 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշեցին.***

ՈՐՈՇՈՒՄ 43/1

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 16-րդ ենթակետով և Երևանի

պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 16-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի 2019-2020՝ ուստարվա երկրորդ կիսամյակի նիստերի ժամանակացույցը՝ համաձայն հավելված 1-ի:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

***<u>Օրակարգի երկրորդ</u>*՝** « ԵՊՀ ԻՄ 2019-2020 ուստարվա երկրորդ կիսամյակի անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցուցակի հաստատում» հարցի կապակցությամբ լսեցին ԵՊՀ ԻՄ ուսումնամեթոդական վարչության պետ Ա. Դավթյանի հաղորդումը:

Նա նշեց, որ ԵՊՀ ԻՄ-ում ունենք 13 անվանական կրթաթոշակ, որից 10-ը ԵՊՀ ԻՄ բյուջեի հաշվին, իսկ 3-ը՝ արտաբյուջետային միջոցներից: Արտաբյուջետային կրթաթոշակներից մեկը՝ «Իջևան» անվանական կրթաթոշակը, այս կիսամյակ չի հատկացվելու՝ համայնքի խոշորացման հետ կապված: Անվանական կրթաթոշակի հատկացման հարցը քննարկվել է ֆակուլտետների գիտխորհուրդներում, այնուհետև ներկայացվել է Ուսումնամեթոդական վարչություն: Վարչությունը ստուգել է թեկնածուների տվյալները, և արդյունքում անվանական կրթաթոշակի հավակնող 10-ը ուսանողներից 2-ը չեն համապատասխանել ԵՊՀ ԻՄ-ում գործող ուսանողական նպաստների, պետական և հետբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգի 34-րդ կետի պահանջներին:

ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի հաստատմանն է ներկայացվում 8 անվանական կրթաթոշակի հավակնող ուսանողների ցուցակը՝ տես հավելված 2:

Արտահայտվեց – ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանը, ՈՒԽ նախագահ Ա. Ավետիսյանը և այլոք։

Մասնավորապես ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանը նշեց, որ լավ կլիներ, եթե բոլոր անվանական կրթաթոշակների համար ունենայինք հավակնորդներ, իսկ ՈՒԽ նախագահ Ա. Ավետիսյանը նշեց, որ վերոհիշյալ ուսանողների ակտիվությունը ֆակուլտետներում ներկայացվել է ՈՒԽ-ի կողմից։

Այնուհետև ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանը առաջարկեց հաստատել 2019-2020 ուստարվա երկրորդ կիսամյակի անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցուցակը՝ համաձայն հավելված 2-ի:

Բաց քվեարկությամբ, միաձայն՝ 31 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշեցին.***

Որոշում 43/2

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 7-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 7-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել 2019-2020 ուստարվա երկրորդ կիսամյակի անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցուցակը՝ համաձայն հավելված 2-ի:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրամանագրման պահից:

<u>Օրակարգի երրորդ</u> `« Հաղորդում ԵՊՀ ԻՄ 2019թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի (բյուջե) հունվար-դեկտեմբեր կատարողականի մասին» հարցի կապակցությամբ լսեցին ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանի հաղորդումը: Նա նշեց, որ կատարողականը նախօրոք ուղարկվել է գիտական խորհրդի անդամներին և բոլորը հնարավորություն են ունեցել ծանոթանալ: Ա. Մակարյանը նշեց, որ նախատեսված 515 միլիոն դրամի փոխարեն ծախսվել է մոտ 497 միլիոն դրամ, խնայվել է մոտ 18 միլիոն դրամ: Նա նշեց, որ աշխատավարձի մասով ունեցել ենք մոտ 1 միլիոն դրամի գերածախս՝ 415 միլիոն դրամի փոխարեն ծախսվել է 416 միլիոն դրամ, որը պայմանավորված է այն հանգամանքով, որ 2 անգամ ստացել ենք պարգևատրում՝ ԵՊՀ 100 ամյակի և ԵՊՀ ԻՄ 25 ամյակի կապակցությամբ, ինչպես նաև մեր աշխատակցի հետ կապված դատական պրոցեսով: Ա. Մակարյանը նշեց, որ շատ մտահոգիչ է այն հանգամանքը, որ բուջեի մոտ 88 տոկոստը ծախսվում է աշխատավարձի վրա: Իսկ հիմնանորգման համար նախատեսված 3 միլիոն դրամը չի ծախսվել: ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանը մանրամասն ներկայացրեց ԵՊՀ ԻՄ 2019թ.-ի բուջե ելքերը և մուտքերը, թվերը համեմատելով նախահաշվի հետ: Կատարողականը ամբողջությամբ տես հավելված 3-ում:

Արտահայտվեցին – ԵՊՀ բնական և ճշգրիտ մասնագիտությունների գծով պրոռեկտոր Ռ. Բարխուդարյանը, ԵՊՀ ԻՄ ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար Գ. Սիմոնյանը, Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար Գ. Հովհաննիսյանը, Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի վարիչ Մ. Միքայելյանը, ԵՊՀ ԻՄ գլխավոր հաշվապահ Մ. Մխիթարյանը, ԵՊՀ ԻՄ ՈՒԽ նախագահ Ա. Ավետիսյանը:

Մասնավորապես պրոֆեսոր Մ. Միքայելյանը հարցրցրեց, թե ինչու հիմնանորգման համար նախատեսված 3 միլիոն դրամը չի ծախսվել, որին ի

պատասխամ ԵՊՀ ԻՄ գլխավոր հաշվապահ Մ. Մխիթարյանը նշեց, որ վերանորոգման աշխատանքերը իրականացվել են Մասնաճյուղի աշխատուժով, և ծախսը գնացել է այլ տողով: Իսկ ԵՊՀ ԻՄ ՈՒԽ նախագահ Ա. Ավետիսյանը նշեց, որ Մասնաճյուղը աշխատել է էկոնոմ ռեժիմով, որը գովելի է:

Որոշեցին.

Որոշում 43/3

Ընդունել ի գիտություն:

<u>Օրակարգի չորրորդ</u>՝ «Հաղորդում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ 2018-2019 ուստարվա ուսանողական հարցումների արդյունքների մասին» լսեցին ԵՊՀ ԻՄ ուսումնամեթոդական վարչության պետ Ա. Դավթյանի հաղորդումը: Նա նշեց, որ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում 2018-2019 ուստարվա դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումներին մասնակցել են առկա ուսուցման ուսանողական հիմնական համակազմի 47,74%-ը (նախորդ հաշվետու տարում՝ 61,73 %), իսկ հեռակա ուսուցման՝ 25,5%-ը (նախորդ հաշվետու տարում՝ 40,58 %): Նշեց, որ հարցումների արդյունքում թե՛ առկա, թե՛ հեռակա ուսուցման համակարգերում գրանցվել է մասնակցության նվազում, ինչը պայմանավորված է համալսարանական էլեկտրոնային փոստից ուսանողության քիչ օգտվելու հանգամանքով: Ըստ ֆակուլտետների հարցման արդյունքների՝ առկա ուսուցման համակարգում ամենաբարձր ցուցանիշն ունի Տնտեսագիտության, իսկ ամենացածրը՝ Բնական գիտությունների ֆակուլտետը: Դեկան և դեկանի տեղակալ աշխատանքի գնահատման ամենաբարձր ցուցանիշն առկա ուսուցման համակարգում ունի Հումանիտար գիտությունների ֆակուլտետը, իսկ դեկանատի աշխատակիցների ցուցանիշով՝ Տնտեսագիտության ֆակուլտետը:

Ըստ ամբիոնների՝ առկա ուսուցման համակարգում ամենաբարձր ցուցանիշն ունի Օտար լեզուների, իսկ ամենացածրը՝ Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոնը: Ավելի մանրամասն կարող եք տեսնել հավելված 4-ում:

<u>Արտահայտվեցին</u> – ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանը, ԵՊՀ-ի բնական և ճշգրիտ մասնագիտությունների գծով պրոռեկտոր Ռաֆայել Բարխուդարյանը, Տուրիզմի և մշակութաբանության ամբիոնի վարիչի ժ/պ Գ. Հովհաննիսյանը, ԵՊՀ ԻՄ ՈՒԽ նախագահ Ա. Ավետիսյանը, ԵՊՀ ԻՄ գրադարանի վարիչ Վ. Պողոսյանը և այլոք:

Ա. Մակարյանը նշեց, որ ԵՊՀ–ում և ԵՊՀ ԻՄ-ում իրականացված հարցումների թվերը համադրելի են, բացատրությունը միարժեք չէ, բայց ըստ էության դա մոտիվացված ուսանողության թվաքանակն է: Ռ. Բարխուդարյանը նշեց, որ չկա էական խնդիր, նա նշեց, որ եթե փոձենք ինչ-որ միջոցով ստիպենք ուսանողությանը մասնակցել հարցումներին, ապա այն ուսանողը, որը չէր ուզում գնահատել դասախոսին, իր գնահատականով կազդի արդյունարար գնահատականի օբյեկտիվության վրա: Նա նշեց նաև, որ ուսանողների ակտիվությունը կարելի է մեծացնել տարբեր եղանակներով՝ պարբերաբար հիշեցնել այդ մասին, տրամադրել ավելի երկար ժամանակահատված, և պետք չէ պատժիչ և ստիպողական մեթոդներ կիրառել: ԵՊՀ ԻՄ ՈՒԽ նախագահ Ա. Ավետիսյանը նշեց, որ հաճախ ուսանողներ չեն կարողանում քվեարկել տեխնիկական պատճառներով՝ չեն կարողանում մուտք գործել իրենց տրված էլեկտրոնային հասցեներով, ոմանք կորցնում են գաղտնաբառերը և դրանք չեն կարողանում վերականգնել, քանի, որ իրենք ունեն նաև այլ անձնական օգտագործման էլեկտրոնային հասցեներ և ԵՊՀ դոմենում գտնվող էլեկտրոնային հասցեներից քիչ են օգտվում և առաջարկեց հարցումները իրականացնել էլեկտրոնային, բայց ուսանողների սեփական էլեկտրոնային հասցեներով: Ռ. Բարխուդարյանը նշեց, որ այդ խնդիրները

կան նաև ԵՊՀ-ում և արդեն փնտրվում են լուծումներ վերոհիշյալ տեխնիկական խնդիրների համար և շուտով հասանելի կլինեն նաև հավելվածներ տարբեր հարթակներում: Իսկ ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանը նշեց, որ մինչ այդ մեր ուսանողները նմանատիպ խնդիրները լուծելու համար կարող են մոտենալ ՏՀՍԶ բաժնի աշխատակից Վ. Զուրաբյանին:

Որոշեցին

Որոշում 43/4

Ընդունել ի գիտություն:

<u>Օրակարգի հինգերորդ</u>՝ «Ռուսաց լեզու և գրականություն» և «Հոգեբանություն» կրթական ծրագրերի հաստատման մասին լսեցին ՄԿՈԱ բաժնի վարիչ Մ. Ճաղարյանի հաղորդումը:

Նա նշեց, որ Մասնաճյուղի 2019-2023թթ. բակալավրի 2 կրթական ծրագրերը՝ «Ռուսաց լեզու և գրականություն» և «Հոգեբանություն», մասնաճյուղի տնօրենի պաշտոնակատար պարոն Մակարյանի գրությամբ և ԵՊՀ հումանիտար և հասարակագիտական մասնագիտությունների գծով պրոռեկտոր տիկին Է.Ասրիյանի հանձնարարականով 2019թ. դեկտեմբերին արտաքին փորձաքննություն են անցել ԵՊՀ համապատասխան ֆակուլտետներում: Նշված երկու կրթական ծրագրերի արտաքին փորձաքննության արդյունքները 2020թ. հունվարին քննարկվել են համապատասխանաբար Մանկավարժության և հոգեբանության ամբիոնում և Օտար լեզուների ամբիոնում: «Հոգեբանություն» կրթական ծրագրի պատասխանատու պ-ն Լ.Սարգսյանը ներկայացրել է իր տեսակետը ծրագրի փորձաքննության արդյունքների վերաբերյալ, ապա ամբիոնը որոշել է, հաշվի առնելով այդ արդյունքները, վերանայել ծրագիրը և 2020-2024թթ. կրթական ծրագրում ներառել համապատասխան փոփոխությունները: Մանրամասն Ա.

Ճաղարյանի հաղորդումը կարող եք տեսնել հավելված 5-ում, «Հոգեբանություն» կրթական ծրագրը՝ հավելված 6-ում, «Ռուսաց լեզու և գրականություն» կրթական ծրագրը՝ հավելված 7-ում։

Բաց քվեարկությամբ, միաձայն՝ 31 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշեցին.***

Որոշեցին

Որոշում 43/5

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 5-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 5-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

- Հաստատել Հոգեբանություն (031301.01.6)՝ կրթական ծրագիրը համաձայն հավելված 6-ի։

Բաց քվեարկությամբ, միաձայն՝ 31 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշեցին.***

Որոշեցին

Որոշում 43/6

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 5-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 5-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

- Հաստատել Ռուսաց լեզու և գրականություն (011401.00.6)՝ կրթական ծրագիրը համաձայն հավելված 7-ի։

<u>Օրակարգի վեցերորդ</u>՝ «ԵՊՀ ԻՄ «Տուրիզմի կառավարման և մշակութաբանության» ամբիոնի ասիստենտ, տնտեսագիտության թեկնածու **Սիմոն Հովհաննեսի Իսկաջյանին** և ԵՊՀ ԻՄ «Հայոց լեզվի և գրականության» ամբիոնի ասիստենտ, բանասիրական գիտությունների թեկնածու **Ալիսա Զավենի Հասանյանին** դոցենտի գիտական կոչում ստանալու համար սահմանված գործընթացին մասնակցելու մասին» հարցի կապակցությամբ լսեցին ԵՊՀ ԻՄ գիտքարտուղար Մ. Աթոյանի հաղորդումը:

ԵՊՀ ԻՄ հայոց լեզվի և գրականության ամբիոնի ասիստենտ Ալիսա Զավենի Հասանյանին դոցենտի գիտական կոչում ստանալու համար սահմանված գործընթացին մասնակցելու մասին ԵՊՀ ԻՄ գիտքարտուղար Մ. Աթոյանը նշեց, որ ԵՊՀ ԻՄ հայոց լեզվի և գրականության ամբիոնի 2019թ. նոյեմբերի 15-ի թիվ 4 նիստում քննարկվել է նույն ամբիոնի ասիստենտ, Ալիսա Զավենի Հասանյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու հարցը, և հաշվի առնելով հայցողի գիտամանկավարժական գործունեության տվյալները՝ նրան երաշխավորել են դոցենտի գիտական կոչում շնորհելու համար և դիմել են ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդին՝ առաջարկելով միջնորդել ԵՊՀ-ի գիտական խորհրդին՝ Ալիսա Զավենի Հասանյանին շնորհել դոցենտի գիտական կոչում:

Գիտքարտուղար Մ. Աթոյանը նշեց, որ ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովը քննարկել է հարցը, և ուսումնասիրելով հայցողի անձնական գործի նյութերը, արձանագրել է հետևյալը.

ԵՊՀ ԻՄ հայոց լեզվի և գրականության ամբիոնի ասիստենտ Ալիսա Զավենի Հասանյանը ԵՊՀ ԻՄ-ում 1994-2003թթ. աշխատել է Հումանիտար գիտությունների ֆակուլտետի բանասիրության և հայոց լեզվի ամբիոնի դասախոս։ 2003-2008թթ. Հումանիտար գիտությունների ֆակուլտետի բանասիրության և հայոց լեզվի ամբիոնի ասիստենտ։ 2008-2018թթ.

Հումանիտար գիտությունների ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության ամբիոնի ասիստենտ: 2018թ.-առ այսօր Հայոց լեզվի և գրականության ամբիոնի դոցենտի պաշտոնակատար:

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի հումանիտար գիտությունների ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության ամբիոնի ասիստենտ, բանասիրական գիտությունների թեկնածու Ալիսա Զավենի Հասանյանը ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում երկար տարիներ (քսանհինգ տարուց ավելի) իրականացրել է մասնագիտությանը համապատասխան գիտամանկավարժական գործունեություն:

Նա աչքի է ընկնում գիտամանկավարժական և ուսումնամեթոդական աշխատանքների հարուստ փորձով և արհեստավարժությամբ, նրա դասախոսական աշխատանքը բնութագրվում է տեսական բարձր մակարդակով և նյութի մատուցման հմտությամբ, ինչը մեծապես խթանում է ուսանողների իմացական հետաքրքրությունը: Այդ ամենի անառարկելի վկայությունը պետք է համարել նրա դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումների արդյունքը, որի միջինը կազմում է 4.68 միավոր:

Ա. Զ. Հասանյանը թեկնածուական ատենախոսությունը պաշտպանել է 2006թ., որից հետո նա հրատարակել է 1(մեկ) մենագրություն, ավելի քան 11(տասնմեկ) գիտական և 1 (մեկ) ուսումնամեթոդական հոդված:

Հաշվի առնելով այդ ամենը՝ կարելի է արձանագրել, որ ԵՊՀ ԻՄ հայոց լեզվի և գրականության ամբիոնի ասիստենտ Ալիսա Զավենի Հասանյանի տվյալները բավարար են դոցենտի գիտական կոչում ստանալու համար և կարելի է միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին:

Փակ գաղտնի քվեարկությամբ՝ 27 կողմ, 3 դեմ, 0 ձեռնպահ ***որոշեցին.***

Որոշում 43/7

Հաշվի առնելով, որ ԵՊՀ ԻՄ հայոց լեզվի և գրականության ամբիոնի ասիստենտ Ալիսա Զավենի Հասանյանի գիտամանկավարժական գործունեության տվյալները լիովին համապատասխանում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. հուլիսի 9-ի «Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու մասին» N 615 որոշման 2-րդ՝ «Դոցենտի գիտական կոչում շնորհելը» բաժնի բ. ենթակետի, ինչպես նաև այդ հարցում նորմատիվային այլ փաստաթղթերի պահանջներին, ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 16-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 16-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Երաշխավորել ԵՊՀ ԻՄ հայոց լեզվի և գրականության ամբիոնի ասիստենտ Ալիսա Զավենի Հասանյանին դոցենտի գիտական կոչում ստանալու համար:
2. Միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին՝ ԵՊՀ ԻՄ հայոց լեզվի և գրականության ամբիոնի ասիստենտ Ալիսա Զավենի Հասանյանին շնորհել դոցենտի գիտական կոչում և համապատասխան առաջարկով դիմել ՀՀ ԲՈԿ:

ԵՊՀ ԻՄ տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի ասիստենտ **Սիմոն Հովհաննեսի Իսկաջյանին** դոցենտի գիտական կոչում ստանալու համար սահմանված գործընթացին մասնակցելու հարցի վերաբերյալ ԵՊՀ ԻՄ գիտքարտուղար Մ. Աթոյանը նշեց, որ Տուրիզմի կառավարման մշակութաբանության ամբիոնի 2019թ. Հոկտեմբերի 19-ի թիվ 2 նիստում քննարկվել է նույն ամբիոնի ասիստենտ, Սիմոն Հովհաննեսի

Իսկաջյանի ն դոցենտի գիտական կոչում շնորհելու հարցը, և հաշվի առնելով հայցողի գիտամանկավարժական գործունեության տվյալները, նրան երաշխավորել են դոցենտի գիտական կոչում շնորհելու համար և դիմել են ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդին՝ առաջարկելով միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին՝ Սիմոն Հովհաննեսի Իսկաջյանին շնորհել դոցենտի գիտական կոչում:

Գիտքարտուղար Մ. Աթոյանը նշեց, որ ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովը քննարկել է խնդրո առարկա հարցը և, ուսումնասիրելով հայցողի անձնական գործի նյութերը, արձանագրել է հետևյալը.

ԵՊՀ ԻՄ տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի ասիստենտ Սիմոն Հովհաննեսի Իսկաջյանը ԵՊՀ ԻՄ-ում աշխատել է 2016թ. սեպտեմբերի 01-ից սկսած՝ մինչև 2017թ.-ի հունիսի 14-ը աշխատել է ժամավճարային հիմունքներով ասիստենտ, իսկ 2017-2018, 2018-2019 ուսումնական տարիներին համապատասխանաբար յուրաքանչյուր ուսումնական տարվա սեպտեմբերի 01-ից մինչև հաջորդ տարվա հունիսի 30-ը աշխատել է «Երևանի Պետական Համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի տնտեսագիտության ֆակուլտետի տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնում որպես ասիստենտ:

Ս.Հ. Իսկաջյանը 2019թ. սեպտեմբերի 05-ին ընդունվել է աշխատանքի «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի տնտեսագիտության ֆակուլտետի տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնում՝ որպես ասիստենտ և աշխատում է առ այսօր:

Ամբիոնի ասիստենտ Ս. Հ. Իսկաջյանը գիտական կոչում շնորհող բուհում՝ ԵՊՀ ԻՄ-ում 3 տարի անընդմեջ իրականացնում է մասնագիտությանը համապատասխան գիտամանակավարժական գործունեություն: Նա թեկնածուական ատենախոսություն պաշտպանելուց /2014թ./ հետո տվյալ

բնագավառում ունի հրատարակված 12 գիտական /գիտամեթոդական/ և 1 ուսումնամեթոդական աշխատանք, 1 մենագրություն։

Նրա դասախոսական աշխատանքը բնութագրվում է բարձր մակարդակով և նյութի մատուցման հմտությամբ, ինչը մեծապես խթանում է ուսանողների իմացական հետաքրքրությունը։ Այդ ամենի անառկելի վկայությունը պետք է համարել Ս. Իսկաջկյանի դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումների արդյունքը, որի միջին գնահատականը կազմում է 4,73։

Հաշվի առնելով այդ ամենը՝ կարելի է արձանագրել, որ ԵՊՀ ԻՄ տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի ասիստենտ Սիմոն Հովհաննեսի Իսկաջյանի տվյալները բավարար են դոցենտի գիտական կոչում ստանալու համար և կարելի է միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին:

Փակ գաղտնի քվեարկությամբ՝ 29 կողմ, 2 դեմ, 0 ձեռնպահ ***որոշեցին.***

Որոշում 43/8

Հաշվի առնելով, որ ԵՊՀ ԻՄ տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի ասիստենտ Սիմոն Հովհաննեսի Իսկաջյանի գիտամանկավարժական գործունեության տվյալները լիովին համապատասխանում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. հուլիսի 9-ի «Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու մասին» N 615 որոշման 2-րդ՝ «Դոցենտի գիտական կոչում շնորհելը» բաժնի բ. ենթակետի, ինչպես նաև այդ հարցում նորմատիվային այլ փաստաթղթերի պահանջներին, ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 16-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 16-րդ ենթակետով՝ Երևանի

պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Երաշխավորել ԵՊՀ ԻՄ տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի ասիստենտ Սիմոն Հովհաննեսի Իսկաջյանին դոցենտի գիտական կոչում ստանալու համար:
2. Միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին՝ ԵՊՀ ԻՄ տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի ասիստենտ Սիմոն Հովհաննեսի Իսկաջյանին շնորհել դոցենտի գիտական կոչում և համապատասխան առաջարկով դիմել ՀՀ ԲՈԿ:

<u>Օրակարգի յոթերորդ</u>՝ «Հաղորդում դեկանների ժամանակավոր պաշտոնակատարների և ամբիոնների վարիչների ժամանակավոր պաշտոնակատարների կարգավիճակի մասին» հարցի վերաբերյալ լսեցին ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանի հաղորդումը: Նա նշեց, որ ըստ մեր ամբիոնի վարիչների ընտրության և դեկանների ընտրության գործող կարգերի ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատարները կարող են նշանակվել միչև մեկ տարի ժամանակով, իսկ դեկանի ժամանակավոր պաշտոնակատարները մինչև վեց ամիս ժամկետով, նրանց պաշտոնավարման ժամկետները երկարացվել են մինչև 2019-2020 ուստարվա ավարտը, որպեսզի այդ ընդացքում կազմակերպենք և դեկանների, և ամբիոնների վարիչների ընտրություններ:

<u>Արտահայտվեցին</u> – ԵՊՀ բնական և ճշգրիտ մասնագիտությունների գծով պրոռեկտոր Ռաֆայել Բարխուդարյանը և այլոք:

Մասնավորապես ԵՊՀ բնական և ճշգրիտ մասնագիտությունների գծով պրոռեկտոր Ռաֆայել Բարխուդարյանը կարևորեց ընտրված դեկաններ և ամբիոնների վարիչներ ունենալու հանգամանքը:

Որոշեցին

Որոշում 43/9

Ընդունել ի գիտություն։

<u>Օրակարգի ութերորդ</u> ՝ «ԵՊՀ ԻՄ «Տավուշ» հետազոտական կենտրոնի կանոնադրության հաստատում» հարցի վերաբերյալ լսեցին ԵՊՀ ԻՄ-ի իրավախորհրդատու Ն. Նազարյանի հաղորդումը։ Նա նշեց, որ կանոնակարգը ուղարկվել է բոլորին նախօրոք, բոլորը ծանոթ են։ Այնուհետև ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանը նշեց, որ այս տարի բյուջեում նախատեսվել է որոշակի գումար հետազոտական գրանտ իրականացնելու համար, ռազմավարական պլանում ունենք մի շարք գործաղությունների պլան, որը վերաբերվում էր տարածաշրջանի խնդիրների ուսումնասիրությանը, տարածաշրջանում հետազոտական գործողությունների իրականացմանը, պատվերների ընդունմանը և այլն, որոնց իրականացմամբ էլ պետք է զբաղվի այս կենտրոնը։ Նշվեց, որ կենտրոնի հիմնական խնդիրներից են ԵՊՀ ԻՄ-ում գիտահետազոտական, գիտակրթական և գիտամեթոդական գործունեության զարգացումը, բնագիտական, սոցիալ-տնտեսական, հումանիտար և մշակույթի ոլորտներում հետազոտական ծրագրերի մշակումը, կազմակերպումը և իրականացումը, հետազոտական աշխատանքների արդյունքների առևտրայնացումը, ներհամալսարանական դրամաշնորհների հայտարարումը և մրցույթների կազմակերպումը և այլն։

<u>Արտահայտվեցին</u> – ԵՊՀ բնական և ճշգրիտ մասնագիտությունների գծով պրոռեկտոր Ռաֆայել Բարխուդարյանը, Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի վարիչի պաշտոնակատար Գ. Սիմոնյանը, Տուրիզմի կազավարման և մշակութաբանության ամբիոնի վարիչի պաշտոնակատար Գ. Հովհաննիսյանը և այլոք։

Արտահայտվողները առաջարկեցին որոշակի խմբագրումներով հաստատել կանոնադրությունը համաձայն հավելված 8-ի:

Բաց քվեարկությամբ՝ 29 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ***որոշեցին.***

Որոշում 43/10

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել ԵՊՀ ԻՄ «Տավուշ» հետազոտական կենտրոնի կանոնադրությունը՝ համաձայն հավելված 8-ի:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Ընթացիկ հարցեր:

9.1 Լսեցին՝ «Փոփոխություններ ԵՊՀ ԻՄ հաշվապահության կանոնադրության մեջ» հարցի վերաբերյալ:

Բաց քվեարկությամբ, միաձայն՝ 28 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշեցին***

Որոշում 43/11

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. ԵՊՀ ԻՄ–ի գիտական խորհիրդի թիվ 35 նիստում (26-ը հունվարի 2019թ.) հաստատված ԵՊՀ ԻՄ հաշվապահության կանոնադրության մեջ 7-րդ կետը՝

7. ԵՊՀ ԻՄ հաշվապահության կազմում ներառված են հետևյալ պաշտոնները.

- Գլխավոր հաշվապահ,
- Հաշվապահ,
- Օպերատոր։

ձևակերպել հետևյալ կերպ՝

7. «Հաշվապահության կազմում ներառված են ԵՊՀ ԻՄ հաստիքացուցակով նախատեսված մասնագետները»։

2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

9.2 Լսեցին - «ԵՊՀ ԻՄ անձնակազմի կառավարման և իրավական ապահովման բաժնի կանոնադրության հաստատում» հարցի վերաբերյալ:

Բաց քվեարկությամբ, միաձայն՝ 29 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշեցին.***

Որոշում 43/12

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել ԵՊՀ ԻՄ անձնակազմի կառավարման և իրավական ապահովման բաժնի կանոնադրությունը՝ համաձայն հավելված 9-ի։
2. Ուժը կորցրած ճանաչել ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի 2017 թ. դեկտեմբերի 26-ի թիվ 28 նիստում հաստատված ԵՊՀ ԻՄ մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի կանոնադրությունը։
3. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

9.3 Լսեցին - « ԵՊՀ ԻՄ տնտեսական գործունեության կազմակերպման և սպասարկման բաժնի կանոնադրության հաստատում » հարցի վերաբերյալ:

Բաց քվեարկությամբ, միաձայն՝ 29 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշեցին.***

Որոշում 43/13

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել ԵՊՀ ԻՄ տնտեսական գործունեության կազմակերպման և սպասարկման բաժնի կանոնադրությունը՝ համաձայն հավելված 10-ի:
2. Ուժը կորցրած ճանաչել ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի 2019թ. փետրվարի 23-ի թիվ 36 նիստում հաստատված ԵՊՀ ԻՄ տնտեսական մասի կանոնադրությունը:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

9.4 Լսեցին - «ԵՊՀ ԻՄ ներքին կարգապահական կանոնների /հաստատված ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի 2017թ. դեկտեմբերի 26-ի թիվ 28 նիստում/ 34-րդ, 35-րդ և 36-րդ կետերում փոփոխություններ կատարելու մասին» հարցի վերաբերյալ:

Բաց քվեարկությամբ, միաձայն՝ 28 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշեցին.***

Որոշում 43/14

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի 2017 թ. դեկտեմբերի 26-ի թիվ 28 նիստում հաստատված ԵՊՀ ԻՄ ներքին կարգապահական կանոնների մեջ, 34, 35 և 36-րդ կետերում կատարել հետևյալ փոփոխությունները.

Ա) Կանոնների 34-րդ կետի 1-ին պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.

«Մասնաճյուղում ուսումնական գործընթացը կազմակերպվում է շաբաթվա 5 օրերի ընթացքում, իսկ կախված աշխատանքային անհրաժեշտությունից որոշ ստորաբաժանումների և առանձին աշխատակիցների համար՝ տնօրենի թույլտվությամբ կարող է փոփոխվել աշխատանքային շաբաթվա տևողությունը, պահպանելով շաբաթական ծանրաբեռնվածությունը:»

Բ) Կանոնների 35–րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.

«ԵՊՀ ԻՄ պրոֆեսորադասախոսական համակազմի/ամբիոնի վարիչ, պրոֆեսոր, դոցենտ, ասիստենտ, դասախոս/ աշխատողների համար սահմանվում է հնգօրյա աշխատանքային շաբաթ 32 ժամ ընդհանուր տևողությամբ: ԵՊՀ ԻՄ մյուս աշխատողների համար սահմանվում է հնգօրյա աշխատանքային շաբաթ 36 ժամ ընդհանուր տևողությամբ:»

Գ) Կանոնների 36–րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.

«ԵՊՀ ԻՄ-ում աշխատաժամանակը սահմանվում է 9:00-ից 19:00-ի սահմաններում: Ընդմիջումը սահմանվում է 13:00-ից 13:30-ն ընկած ժամանակահատվածում: Աշխատանքի բնույթից ելնելով յուրաքանչյուր ստորաբաժանում կարող է փոփոխել ընդմիջման ժամը:

Աշխատանքային անհրաժեշտությունով պայմանավորված որոշ ստորաբաժանումների և առանձին աշխատակիցների համար՝ տնօրենի թույլտվությամբ կարող է փոփոխվել աշխատանքային ժամերը 9:00-ից 19:00-ի սահմաններում՝ պահպանելով օրվա ծանրաբեռնվածությունը»

2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Նիստի վերջում ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանը անդրադարձավ հնգօրյա աշխատանքային շաբաթի անցման առավելություններին: Նա նշեց, որ ուսումնական պրոցեսը կազմակերպվելու է երեքշաբթիից շաբաթ՝ ունենալով դասախոսական անձնկազմի պիկ ուրբաթ, շաբաթ օրերի վրա, ուզում ենք որ երկուշաբթին լինի ընդհանրապես ոչ աշխատանքային օր: Անցել է կարծիքների նախնական ուսումնասիրության փուլ և ԵՊՀ ԻՄ աշխատակիցների մեծամասնությունը ընդունում է այս փոփոխությունը:

<u>Արտահայտվեցին</u> – ԵՊՀ-ի բնական և ճշգրիտ մասնագիտությունների գծով պրոռեկտոր Ռաֆայել Բարխուդարյանը, Տուրիզմի և մշակութաբանության ամբիոնի վարիչի ժ/պ Գ. Հովհաննիսյանը, ԵՊՀ ԻՄ արհբյուրոյի նախագահ Ա. Մարգարյանը, ՀՈՒԲ վարիչ Մ. Զուրաբյանը, ՈՒՄՎ պետ Ա. Դավթյանը և այլոք:

Մասնավորապես արտահայտվողների կողմից նշեց, որ լրացուցիչ քննարկման հարց լինել չի կարող, եթե մենք սահմանել ենք հնգօրյա աշխատանքային շաբաթ, ապա նշանակություն չունի թե երբ կսկսենք և երբ կավարտենք, կարևոր է պահել ֆիքսված աշխատաժամանակը, եթե գործող օրենսդրությանը չի հակասում և հնարավոր է իրականացնել, ապա պետք է իրականացնել գործող օրենսդրության շրջանակներում: Նշվեց, նաև, որ այս գրաֆիկին անցնելը ունի շատ առավելություններ, մասնավորապես պրակտիկաների կազմակերպման և վերահսկման առումով, կրճատվում է

ուսանողների ֆինանսական ծախսը մեկ օրվա համար և այլն: Նշվեց, նաև, որ կլինեն նաև աշխատակիցներ, որոք աշխատանքային անհրաժեշտությունից ելնելով կագան նաև երկուշաբթի օրերը:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ_____ Ա. Հ. ՄԱԿԱՐՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ_____Մ. Ս. ԱԹՈՅԱՆ